եւ՝ որչափ համեստ, այնչափ էլ ճարտար կեցուածքով:

«Ուղղակի հոգեթով էր այն արտաքին վերաբերմունքը, որ ունէին տղաները իրենց ուսուցչի հանդէպ: Վերջինս էլ իր կողմից հասկանում էր իր սաների հոգու վրայ ազդել՝ մի կողմից դասաւանդութեան իր զերազանց մեթոտով, դիւրաւ ըմբռնելի էր դարձնում աւանդուող նիւթը սաներին, միւս կողմից էլ իր հայրական, սիրալիր վերաբերմունքով» («Ուղերութիւն», էջ 2–3):

Օտար ճամբորդի եւ ականատեսի այս խօսքերը բաւական յատկանշական են՝ Մաշտոց Աբովեանի անձը եւ գործը գնահատելու համար:

Ահա այդ մարդուն, Աբովեանին է յանձնում զօրավար Նայդհարդտը պարտականութիւն՝ ուղեկցելու Վագներին դէպի Հայաստան:

Մայիսի 1-ին (1843 թ.) նրանք ճամբայ են ընկնում դէպի Երեւան: Այնուհետեւ շատ տողերով Վագներ արտայայտւում է Աբովեանի մասին:

Այս կապակցութեան մէջ առաջ բերենք միայն այն մի քանի տողերը եւս, որ Վագներ յայտնում է Աբովեանի եւ նրա աշակերտների փոխադարձ յարաբերութեան մասին: Իրենց ուսուցչին ճամբայ դնելու համար աշակերտները մի որոշ տարածութիւն միասին են գնացած եղել:

«Պարոն Աբովեանի մատաղ սաները», ասում է Վագներ, «մեզ ճանապարհ դցելու նպատակով բաւական տեղ, մինչեւ քաղաքից դուրս, մեզ հետ եկան իրենց ձիերով: Ես հրճւում էի ի տես այդ աշխոյժ հայ պատանիների, որոնք մանուկների համար անսովոր ճարպիկութեամբ քշում էին իրենց ձիերը: Երբ հասանք Կուր գետի եզերքի ձգուող վերջին այդիներին, այնտեղ կանգ առնել տուինք մեր կառքը եւ մնաք բարով ասացինք մեր ջահել բարեկամներին: Պարոն Աբովեան մի վերջին, մնաս բարովի կարճ ու պարզ խօսք ուղղեց, գերմաներէն լեզուով, իր սաներին ու յորդորեց նրանց, որ իր բացկայութեան օրերին ջանասէր լինին եւ ինքնաշխատութեամբ զբաղուին, որ եւ նրանց համար օգտակար կը լինի, իրեն էլ, նրանց ուսուցչին, ուրախութիւն կը պատճառի: Ապա նա բարեկամաբար իր ձեռքը մեկնեց սաներին, հերթով: Եւ երբ մեր կառապանը մտրակը արդէն քաշել էր եւ ձիերին քառասմբակ առաջ էր քշում գետի եզերքով, մեր յետեւ հնչում էին փոքրիկ ձիաւորների գերմաներէն բարեմաղթութիւնները եւ ցնծութեան խմբական աղաղակները» (էջ 4):

Սոյն կապակցութեան մէջ առաջ բերենք նաեւ այն մի քանի տողերը, որ մենք գտնում ենք Վագների աշխատութեան մէջ, երբ նա խօսում է ռուսական դպրոցների մասին ընդհանրապէս եւ Երեւանի գաւառական (ռուսպետական) դպրոցի շուրջը՝ մասնաւորապէս (էջ 85):

«Դժբախտաբար մինչեւ իսկ Թիֆլիսի գաւառական դպրոցում քիչ կան այնպիսի ուսուցիչներ, որոնք գործի կոչած լինէին այն աղնիւ եռանդով ու երեւան բերէին այն բարերար արդիւնքը, ինչ որ ցոյց է տալիս իմ կողմից արդէն քանիցս յիշատակուած աղնիւ հայը, Աբովեանը, Պարրոտի բարեկամը եւ գերման բարձրագոյն դպրոցի սանը: Վերին աստիճանի լքուած վիճակի մէջ էր մանաւանդ Երեւանի գաւառական դպրոցը, 1843-ին: Ուսուցիչների տգիտութեանը եւ ծուլութեանը համապատասխան էր նաեւ իրենց աշակերտների յառաջդիմութիւնը, որոնք, հակառակ իրենց բնական ընդունակութիւններին, անգամ տարիներ դպրոց յաճախելուց յետոյ՝ տակաւին չէին կարողացել զարթնել հոգեկան քնած վիճակից: Որչափ տարօրինակ տպաւորութիւն թողեց ինձ վրայ Երեւանի այդ դպրոցի անասելի խղճուկ վիճակը, այնչափ էլ, ընդհակառակը, հաճելի անակնկալ էր եղել ինձ համար հոգեկան այն կենսունակութիւնը, սաների գիտութեան եւ բարոյական այն բարձր մակարդակը, որ իշխում էր պարոն Աբովեանի Թիֆլիսեան դպրոցում:

«Անդրկովկասից բաժանուելուցս քիչ առաջ ուրախ էի ես տեղեկանալու, որ պարոն Աբովեանը իր հայրենի Երեւան քաղաքի գաւառական դպրոցի տեսուչ է նշանակուած: Մի մարդ, որ այդչափ ընդունակ էր եւ իմացական ու առաքինի. մի մարդ, որ լի էր այդչափ աղ-